

Ազգիս վեհ՝ Հայրապետը, որ որչափ քաջագործ է մտքով, Հայկական եկեղեցին հո-
րամասն անփորձութիւններէն եւ զեղծութիւններէն, նոյնչափ եւ քաջագործ է նոյն եկեղեցւոյ
խափանուած Ազգային բարեկարգութիւնները վերստին հորոգել, նորերումն ուղղել Ս. Սի-
նոդին մի կոնգրէսի, որի հետ առաջարկելով Աւագ քաճահայի պաշտաման ու պարտա-
ւորութեանց գրաւոր հրահանգութիւնները, բարեհաճեց առաջագրել Ս. Սինոդին տպո-
գրել տալ դպնա եւ ուղարկել ամենայն թիմական Առեւտրի եւ Հոգեւոր կառավարու-
թեանց, որ իւրեանց վիճակներում գտնուած ամեն աւագ քաջագործից յանձնեն նրան-
ցից մի մի օրինակ իւրեանց պաշտամունքն ու պարտաւորութիւնքն այն հրահանգու-
թեանց համեմատ վարելու համար:

Նոյն հրահանգութիւնները խոտանումէ խմբագրութիւնն հրատարակել Արարատայ
յառաջագալ ամսագրերում ի տեղեկութիւն մեր սիրելի Ազգայնաց:

* *

Ազգիս վեհախառ Հայրապետի բարեհաճ հրամանաւ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
միաբան բարեշնորհ Խորէն Վարդապետ Ստեփանէ կարգեցու Նոր—Նախընկալ Ս.
Խաչի վանուց վանահայր ի տեղի Պետրոս վարդապետի:

* *

Ս. Երուսաղէմի Գահավիճեան վանուց պարտուց բարձման պատուաբեան Գանձնաժողովոյ,
Գեր. Պատրիարք Կ. Պօլոյ Ներսէս Արքեպիսկոպոսի եւ Երուսաղէմի Գեր. Պատրիարք
Լսայի Արքեպիսկոպոսի խնդրանաց համաձայն Ազգիս վեհախառ Հայրապետը թոյլա-
տրած էր Ս. Երուսաղէմի միաբաններից երկու վարդապետներ ուղարկել Ռուսաստանի
Հայոց մէջ կամուր նպատակներ հաւաքել նոյն Ս. վանուց պարտուց բարձման համար.
ուստի Երուսաղէմի միաբաններից արժանապատիւ վարդապետք Մամբրէ Տ. Մարկոսեան
եւ Սահակ Խապայեան յիշեալ դրամական նպատակաւ հաւաքութեան պաշտօնի կատար-
ման համար յիշեալ Գանձնաժողովոյ եւ Երուսաղէմի եւ Կ. Պօլոյ Պատրիարք Արքե-
պիսկոպոսաց ստորագրութեամբք եւ Ս. Սինոդից վաւերացուցեալ երկու ամսաւերով
հրաման ստացած են, Մամբրէ վարդապետն Շամսիւլոյ, Աստրախանայ, Բեռաբոքիոյ եւ
Նոր—Նախընկալի վիճակաց մերադնէից մէջ, իսկ Սահակ վարդապետն՝ Երեւանայ, Տրփ-
խիսու եւ Արցախու (Վարապադու) վիճակաց մերադնէից մէջ կամուր նուէր եւ նը-
պատներ ստանալոյ համար, Իւրաքանչիւրը իւր որոշեալ կողմերը շրջագայելու ելած է:
Նպատակաւ հաւաքութիւնը մի անգամի համար է. եւ իւրաքանչիւր նպատակաւ պարտի
ստորագրել վաւերացուցեալ ամսաւերում միայն, որ մի մի հոտ ունի իւրաքանչիւր
նպատակաւ վարդապետն:

Քաջայոյս եմք. որ Ռուսիոյ մեր սիրելի ազգայնք իւրեանց կարեաց չափով կջանան
նպատակ առատ նուիրաբերութեամբք ի բարձումն մեծաբումար պարտուց յիշեալ Ս.
վանուց ի վաւս եւ ի պատիւ Տնօրինական Ս. Տեղեաց եւ ի պարծանա Ազգիս:

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՍԻՆՕԴԻ.

Ի 25 Նոյեմբերի 1884 ամի. Ռոմիեան Գետաշէնցի Սահակ քահանայ Արքե-
րեանց վստահեցաւ է կատարել զբացասեալ պատկ Յովնանու Աւագեան ընդ Սիրամար-
զի Յովնանիսեանց. ըստ հրամանի վեհ. Հայրապետի Ազգիս Ս. Սինոդին ի զուշու-
թիւն եւ ի խրատ արգել զնա ի քահանայադործութենէ եւ ենթարկեաց անորոշ ժա-
մանակաւ ընդ եկեղեցական ապաշխարանօր, զի սաղմոս ի ձեռին առ զբան տեղա-
կան եկեղեցւոյ բաւեցէ զյանցանա իւր: